ՀՀ, ք. Դիլիջան 3901
Մյասնիկյան 87
Հեռ. 374 94050696
youthideas.ngo@gmail.com
www. youthideassite.wordpress.com
https://www.facebook.com/youthideas.ngo.2016/

30-1
15.10.2019

ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան
խոշորացված համայնքի
համայնքապետ Ա. Սանթրոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սանթրոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. Ո՞վ է Դիլիջան խոշորացված համայնքում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը (խնդրում ենք նշել անունը, ազգանունը, իր հետ կապի միջոցները),
2. Տեղադրվա՞ծ է արդյոք ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվությունը Ձեր համայնքի պաշտոնական կայքում (եթե այո, ապա խնդրում ենք նշել հիպերհղումը),
3. Խնդրում ենք տրամադրել այն իրավական ակտի պատճենը, որով նշանակվել է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկատվություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հ.Գ. Սեպտեմբերի 28-ը Տեղեկատվության ազատության միջազգային օրն է:

Հարգանքով՝
«Երիտասարդական գաղափարներ» ԵՀԿ
նախագահ Շուշանիկ Սահակյան

X

Շուշանիկ Սահակյան
Նախագահ